Եր. Ա՛յ հայի ախչիկ, մայ շահի ախչիկ,
Տանէն դուս արի, մէջքդ տեսնեմ։
Աղ. Ա՛յ հայի տղայ, մայ շահի տղայ,
Բա վարթ չՔս քաղել, դաստայ չՔս կապել։
Եր. Ա՛յ հայի ախչիկ, մայ շահի ախչիկ,
Տանէն դուս արի, ճոնքերդ տեսնեմ։
Աղ. Ա՛յ հայի տղայ, մայ շահի տղայ,
Ժամ չՔս մտել, կերոն չՔս տեսել։
Եր. Ա՛յ հայի ախչիկ, մայ շահի ախչիկ,
Տանէն դուս արի, ոտներդ տեսնեմ։
Աղ. Ա՛յ հայի տղայ, մայ շահի տղայ,
Կաքաւ չՔս բռնել, տոտեր չՔս տեսել։

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

Ալիւր մաղեմ ձին կգայ,
Եգոր աղէն Ճրբ կգայ,
Ամեն ծառին մի փշատ՝
Սիրած եարիս ումբրը շատ։

Ալ քաթիբէս կարել եմ,
Խաս կոճակը շարել եմ,
Դէ գնա կորիր, գէշ տղայ,
Քանց քեզ լաւը ճարել եմ։

Ախչի, ախչի, ալ ախչի,
Աչքերդ չալ, չալ, ախչի,
Էրնէկ էն օրին կտամ,
Դու մեր տանը տալ, ախչի։

Ախպէր, իմ բաղն անուշ ա,
Մէջը քաղցր եմիշ ա,
Ախպէր, բէդաստաղ չլես,
Եարս քեզանէ անուշ ա։

Ախպրի դրաղը քարքարոտ,
Քաթան շարիքս ծուծառուտ.
Արի թուշդ մին պաչեմ,
Ցորթերդ տանեմ արօտ։

Ամբել ա ձին չի գալի,
Մթնել ա տուն չի գալի,
Ես մի հեռու եար ունիմ,
Մի մատը գիր չի գալի։

Ամբել ա ձուն չի գալի,
Մթնել ա տուն չի գալի,
Շամ եօրդան, դուքնի դօշակ,
Առանց եար քուն չի գալի։

Ամրխանանց կտերը
Ծլվլում են ծտերը,
Ազատ տղի դեղն ինչ ա,
Կոկոմ, շամամ ծծերը։

Ա՛յ ախչի ասես, մասես,
Ծամերիդ ծէրը խաս ա,
Թուշդ դէսն արա պաչեմ,
Վազի գնա մօրդ ասա։

Ա՛յ արխըմը, արխըմը,
Արբէշումի չարխըմը,
Գլուխս գլխիդ ղուրբան,
Զումրուդ կաղնի խալխըմը։

Ա՛յ ասըմը, ասըմը,
Նռան գինին թասըմը,
Ես քի Ճփ սիրեցի,
Վարթերի պասըմը։

Ա՛յ դու առն ու վառն ես,
Կանաչ քոլերի խնձառն ես,
Էն ով կասի թէ ղառն ես,
Դու իմ սիրած եարն ես։

Ա՛յ էս կուռը, էն կուռը,
Թաղել եմ Գեանջայ նուռը,
Ես էս ծուռը չեմ առնել,
Ինձ կգցեմ սև ջուրը։

Ա՛ տղայ, անըմդ ա Բուշան,
Սիպտակ գառանը թուխ նշան,
Աղլուխդ ղըգի նախշեմ,
Զալ, չալ տոտերս քեզ բախշեմ։

Ա՛յ տղայ, աամ, աաա,
Գդակիդ ծալը խաս ա,
Իմ նանը քե ախչիկ չիտայ,
Իմ նանին կաշառք աամ։

Ա՛ տղայ դու խանի որթի,
Հաքինդ լխասմի մորթի,
Թէ ինձնից գումար եար բռնես,
Լէգլին քեզ տանի մորթի։

Ա՛յ տղայ դու բէրաբաշի,
Ղօլթամաջէդ հագի մաշի,
Գամ ըղաքովդ անց կենամ
Թուխ գառը փէշքաշ քաշի։

Ա՛յ տղայ դու ուրես մուրես,
Ես ծարաւ եմ՝ դու ջուր ես,
Մահարլամ-թառլամ շորեր,
Համբարցում գիշերն ո՞ւր ես։

Ա՛յ տղայ դու ատիկ մատիկ,
Աչքերդ նռան հատիկ,
Էն օրէն ինչ քեզ տեսնում եմ,
Համ համբարցում, համ զատիկ,

Ա՛ տղայ դու փէտ ես արել,
Ծմակին փէտ ես արել,
Մեռնիմ վրիդ եարաղին,
Էշխով վրէդ ես արել։

Այ օրօն-օրօն ծաղիկ,
Կարմիր ու տօրօն ծաղիկ,
Խալխին ես մէջլիս կանեմ,
Ու քի միջին կգովեմ։

Այ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տօրօն ծաղիկ,
Ալվալայ խալխ եմ կիտել,
Ես գամ քեզ, օրօն ծաղիկ։

Անձրև ա էկել նամ ա,
Ծոցինդ էրծաթէ ջամ ա,
Գնա քու նանիդ ասա,
Նոր ա էկել, դեռ խամ ա։

Արեը թռաւ հովըն ընգաւ,
Նա մէր մտաւ, ծուխն ընգաւ,
Ախչի, մտիկ քու գլխիդ,
Ալ բաղդադիդ մուխն ընգաւ։

Արևը մեր դուռը մտաւ,
Սիրածը սիրածին գտաւ,
Վայ աղմայ ջան չուստ արա,
Պահած բաներդ փտաւ։

Արևը մէր ա, մէր ա,
Ոչխարը գռնամէր ա,
Ով մէր ունի՝ մէրատէր ա,
Ով մէր չունի, ընչի՞ տէր ա։

Ըրխալուղս կարել եմ,
Ոսկէ կոճակ շարել եմ,
Նանի ջան, դու դարդ չանես,
Ես իմ սիրածը ճարել եմ։

Արտումս ցանել եմ գարի,
Աստուած տայ իմ նանին բարի
Որ ինձ տվուց ջահել եարի,
Դարչին, մեխակ, քահրեբարի։

Բաղիս դուռը բաց ա,
Ոտներս շաղով թաց ա,
Եարիցս հեռացել եմ,
Աչքերս լիքը լաց ա։

Բաղիս միջին վարդ ունիմ,
Աղպորս հետ դարթ ունիմ,
Արի, արի, ջան աղպէր,
Տես քանի սև դարդ ունիմ։

Բաղումս ունեմ բաղմանչի,
Շև կայ, շևի նման չի,
Թարուն դառան դուս թըռան,
Մինն էլ եարիս նման չի։

Բարդի ծառը բարցը ա,
Սիրած եարը քաղցը ա,
Գնա նանին հարցրու,
Թը որ չըտայ՝ փախցրու։

Բարցիս տակին մանիշակ,
Աղպէրս գեանջ ու շիշակ,
Արի հոտ կալ, իմ աղպէր,
Գցել եմ զարբաբ դոշակ։

Բերդի տակին ցել ունեմ.
Ըռանդ, ըռանդ թել ունեմ,
Թելիկ մելիկ սարկաւագ,
Դեռ քեզանից մէլ ունեմ։

Գենգդարայ սարը սար ա,
Տակը չնգել ու քար ա,
Մեռնեմ եարիս արևին,
Իմ եարը մին ու ճար ա։

Գերանի տակը ձին ա,
Իմ եարի կարէն հին ա,
Էն ով կասի հին ա,
Ալամ աշխարքի գին ա։

Գիւլում, գիւլում, գիւլասար,
Գոլք եմ մանել հաւասար,
Ես մի շէգլիկ եար ունեմ,
Մի աչկը թեքն ա, մինը եասար։

Գիւլում կասեմ կշարեմ,
Տոպրակ կածեմ կշարեմ.
Երկրէ երկիր ման կգամ,
Քանց քեզ լաւը կճարեմ։

Գնացի ջուրը ջրի,
Ոտս ընգաւ օցի լղի,
Իմ հօրն ու մօրն ինչ ասեմ,
Ինձ խի՞ տուին դարիը տղի։

Գնացի ջուրը տեսայ,
Շարաքու դուռը տեսայ,
Շարաքու դռան միջին,
Մէկ սիրուն տղայ տեսայ։

Գնա տես դու կալի հորթին,
Ձիգ տվի հորթի մորթին,
Ով իմ սիրածն ինձ չտայ,
Թաղի թաքաւոր որթին։

Գոմի փայը սալել եմ,
Սարի ձիանը նալել եմ,
Կորի գնա, շան տղայ,
Քեզնից լաւը ճարել եմ։

Գուլթանի երգէն ծէրը,
Սիրել ա սիրունի տէրը,
Սիրունի տէրը ինչ անէ,
Արէնտէր ա հէրն ու մէրը։

Գուլթանի թևը դուն ես,
Անմեղ ես, խաբար չունիս,
Եարը դառան գնացին,
Մգար դու նամուս չունիս։

Գուլթանը վարի ցել դու,
Եղնայ մշակիդ մէջ տու,
Զուխէդ կռնովդ քաշի,
Եդ դառ կտրովը եաշի։

Դէզ եմ դրել հաւան չեմ,
Ինձու գլխու դիւան չեմ,
Ինձ դնակամորթ արէք,
Ես էն եարին հաւան չեմ։

Դու կաղնել ես բարցը հովին,
Փուքուրմ ա դօշիդ մովին,
Էրնէկ ծոցիդ քնողին,
Շամամ ծծերդ բռնողին։

Դուքնի միջի արաղը,
Թմամել ա թարաղը,
Հրէս կգայ իմ եարը,
Վրէն կապած եարաղը։

Եարի կշտին եար պտի,
Աղ ու կանաչ խիար պտի,
Ամանս, նանի, մի անի,
Եարս ինձ բարեբար պտի։

Եղ եմ հալել թասըմը,
Վարթէորի պասըմը,
Ա՛ տղայ, քի ձրտի սիրեցի,
Ժամի ըղաքի դասըմը։

Գնամ սարերը որս կանեմ,
Քարերը գլխիս բարց կանեմ,
Հարցնում եմ քեզ, բարցը սար,
Կորցրել եմ ջէյրան եար։

Ես գնում եմ լաց չլես,
Արտասունքով թաց չլես,
Մեռնիմ խումար ունքերուդ,
Հէնց քնի որ բաց չլես։

Ես եմ Լեղուարայ քամին,
Զանղչանայ ծովի գամին,
Խաբար տարէք իմ նանին,
Հասրաթ եմ ծոցի համին։

Ես լիսասող եմ երկնքին,
Շողս տուած գետնքին,
Դեռ շատ կարօտ ման կգաս,
Էս իմ չալ չալ աչք, ունքին։

Ես ծարաւ եմ ջուր բերէք,
Սարերիցը ախպիր բերէք,
Տանըցիքս թամամ են,
Դրացի եարս տուն բերէք։

Ես հողերի տուխտն եմ,
Լիքը ֆորերի կուխպէն եմ,
Ա՜յ դալամ քաշող տղայ,
Մնգանդ ծէրի թուխտմէն եմ։

Ես դուշ եմ թևս դեղին,
Մանն կգամ եարիս գեղին,
Իմ ջանս դուրբան կտամ,
Իմ եարիս ցաւող տեղին։

Ես մի բուռը խոտ ունեմ,
Հաղար թումանի Շոթ ունեմ,
Ես քո ճոթը ի՞նչ կանեմ,
Նարգիզ պտի հոտ ունեմ։

Ես նստել եմ ախպրի ակը,
Քաղել եմ հոնի խակը,
Ով իմ լաւ չի ասէ,
Ոչ տեսնու որթու թագը։

Ես չոբան եմ շուն չունեմ,
Աշխարքումս տուն չունեմ,
Սիրուն աղջիկ, խիղճ արի,
Առանց քեզ ես քուն չունեմ։

Էդ գառը պլոլիկ գառն ա,
Թող գայ մեր սուրուն գառնայ,
Էրէսդ էրէսիս արա,
Քրտինքդ ծոցս գառնայ։

Էդ հողն իմ ա՝ վարի՛լ մի,
Վարելիս չափարիլ մի,
Չափար բասմայ կոխիլ մի,
Էդ հարն ինն ա՝ խափել մի։

Էկէք գնանք մուխ անենք,
Ղամշուտ Թալին ծուխ անենք,
Ով ինձ սիրածիցս հանի,
Որթու թագը թուխ անենք։

Էն սարըմը էրկու ծուխ,
Մինը հանգած, մինը մուխ,
Ես մի եար եմ կորցրել,
Քինթը կալած, վարսը թուխ։

Էս ձորն ըվէր ծնէփակ,
Շղակոլոլ ըրեքնակ,
Ըրեքնակին թև ախպէր,
Շաքար մաղեմ, կեր, ախպէր։

Էսօր պաս ա միջունք ա,
Ամբել ա, պտի ձուն գայ,
Ախչի բուգդ սարդափ ա,
Արանքինը ուլունք ա։

Էս քիշերը աստղալիս ա,
Աստղերը վռխալիս ա,
Ճամփայ տվէք, ախչկերք,
Կարօտ եարս գալիս ա։

Էս քշեր էրազ տեսայ,
Էս դզերը վարած տեսայ,
Նամուսդ կտրի, ա՛յ տղայ,
Սիրածդ տարած տեսայ։

Ըսօր ամբ ա պարզմ չի,
Ղալամ եմ բռնել սազմ չի,
Ըսօր ինձ համար հէչ օր ա,
Արին սիրտս պարզմ չի։

Ըսօր մեզ համբարցըմ ա,
Աստծուն փառք ի բարցըմ ա,
Քրիստոս երկինք համբարցաւ,
Ողջիս բաղդը բացւըմ ա։

Ըսօր ուրբաթ ա, պաս ա,
Դիմացը կալ ու կաս ա,
Որթիդ մեռնի, վարթապետ,
Դու խի ասիր չհաս ա։

Թեղ տուած թեղիդ մեռնեմ,
Ման էկած տեղիդ մեռնեմ,
Իրեք օր ա տեհել չեմ,
Նոր ծլած բեղիդ մեռնեմ։

Թուխ մազերդ ըլորել ես,
Աչքերդ բըլորել ես,
Իրեք օր ա տեհել չեմ,
Իմ սիրտը մըլորել ես։

Թուր ու թվանք թամքումը,
Ջուխտ աղունակ վանքումը,
Մեռնիմ սիրական եարիս,
Ինքը քաղկի ճամփումը։

Իմ ախպէրը սարըմն ա,
Շուին թևքի կարըմն ա,
Ախպէր ջան, շուիդ ածա,
Քիրդ Լօռուայ քարըմն ա։

Իմ եարին լաւ եար պտէր,
Գլխին կօշկայ սար պտէր,
Էն շոքած, քրտնած վախտը՝
Մի կանաչ խիար պտէր։

Իմ ծաղիկս քաղած ա,
Տէփրի *) տակին պահած ա,
Ծաղիկ եարս տուն չեկաւ,
Ջանս սաղ-սաղ թաղած ա,

Լալվարայ սարը սար ա,
Տակը ջնջիլ ու քար ա,
Խաբար արէք իմ նանին,
Սիրածս մինուճար ա։

Լէհին եմ կարել խաս ա,
Դօշ եմ դրել գըլաս ա,
Ջանին մեռնեմ իմ եարի,
Մինն ա հազարի բաս ա։

Լիսնեակը կեռ ու քեամար,
Քիրը մեռնի ախպօր հըմար,
Ցիսուն օր պաս եմ պըհել,
Իմ եարի ճամփի հըմար։

Լիսնեակը ցերեգ, ցերեգ,
Շաքար կոտրեմ, տարէք կերէք,
Աղլուխս կաշառք կտամ,
Նարիցս խաբար բերէք։

Լօռուայ միջին դով կտամ,
Քաթանս իմ գլխով կտամ,
Ով որ կասի եարդ էկաւ,
Ֆօրթը տակին կով կտամ։

Լօռուայ ջուրը սառել ա,
Ղամշին կուռս առել ա,
Քանքլիկ ու թանթլիկ տղէն,
Ուշք ու միտքս տարել ա։

Խաղ կասեմ խաղի գլխին,
Մելիքը բաղի գլխին,
Սա էլ ինչ դարդ կանի,
Ֆողը ըլի կաղի գլխին։

Ծալք եմ դրել հաւան չեմ,
Ինձու գլխու դիւան չեմ,
Ինձ փունջ թրամորթ արէք,
Ես էդ եարին հաւան չեմ։

Ծաղկավանքին ուխտ եմ արել
Շէջ ծամերս ջուխտ եմ արել,
Ա՛յ տղայ էլ խօսալ չի ուզիլ,
Ես քի համար թուղթ եմ արել։

Ծաղիկ, ծաղկեվանայ ես,
Ասլդ [1]) Ըրևանայ ես,
Տարէն մէջտ [2]) կգաս,
Մագեամ [3]) Նուբարխանայ ես։

Ծաղիկ ծաղիկ ծաղկաքաղ,
Լիս ու արև ոսկէմաղ,
Արի գնանք սէյր անենք,
Դու ինձ բլբիլ, ես քի բաղ։

*) Մասուցարանի նման, փայտից, որի օգնութեամբ հացհատիկներից ջոկում են քարոտ մասերը։

[1]) Ցեղ. [2]) մի անգամ. [3]) մթթէ.

Ծաղիկ եմ քաղել դեղին ա,
Իմ եարը ձեր գեղէն ա,
Հել ու մեխակ շատ ունեմ,
Հրէ եարիս ձեռին ա։

Ծաղիկ եմ քաղել էս ա,
Ջանիդ մատաղ, ջան փէսայ,
Տղէքը շատ բան կհաչան,
Ախչկերանից ծէսն էս ա։

Ծաղիկ եմ քաղել նարնջի.
Ա՛ տղայ, վեր արի փնջի,
Իմ մէրը քի ախչիկ չի տալ,
Բանի ման գաս եաւնջի [1])։

Ծաղիկ ունեմ դեղին ա,
Իմ ուղողը գեղին ա,
Էլն էլ գիդի, ալամն էլ,
Էն ըրեցի տղէն ա։

Ծառի տակը հով քամի,
Բանքուլդ քամին տանի,
Բա դու սարում, ձորում,
Իմ քունը ո՞նց կտանի։

Ծառ ունիմ ծիրանի,
Բամին թել թել կտանի,
Արի գնանք դիւանի,
Ում ղսմաթն ա նա տանի։

Ծիրան եմ քաղել նուշը,
Պողնցիս վարդի փուշը,
Փունջ կապեմ ախպօրս տամ,
Պաչ անեմ կարմիր թուշը։

Ծիրանին թել թել մանած,
Իմ տեհած, իմ հաւանած,
Իրեք օր ա տեհել չեմ,
Հենց եմ լէգզու թալանած։

Ծիրպնի ծառ, բար մի տար,
Ճխկներդ իրար մի տար,
Ամէն մէջդ մտնելով,
Դարդերս իրար մի տար։

Ծիրանի մանիշակը թերի,
Կարօտ եմ քաղցր սէրի,
Սիրածը սիրածից հանողի
Ազիզ որթին թորնմը էրի։

Ծմակին հորս եմ արել,
Աչքերս չորս եմ արել,
Վատ խաբարդ լսել եմ,
Արինը փորս եմ արել։

Կանաչ տէփուր մէյտան ա,
Տեհէք իմ եարը տանն ա,
Ութ օր ա, որ տէհել չեմ
Սիրտս ո՞նց կդիմանայ։

Կարմիր վարթը ջամով ա,
Սիրած եարը համով ա,
Ըստի զօռի բան չկայ,
Սովդէն իրան կամովն ա։

Կոխպայ քարը աղի ա,
Իմ մազերը ջաղի ա,
Իմ մազերը հուսել եմ,
Դունչս էրէսիդ քսել եմ։

Կտեր կաղնողին մեռնեմ,
Աղլուխ բռնողին մեռնեմ,
Ըսօր իմ եարը տեհել չեմ,
Իմ եար տեննողին մեռնեմ։

[1]) Ամէն բանից զուրկ մնացած, անբաղդ.

Կտերը կայ դժդմբոց,
Շունը կ'քնի՝ ես ոչ,
Ճրագները վառել եմ,
Իմ եարը մոլորի ոչ։

Կտրովս քոչ ա գընում,
Քոչ քոչի մէջ ա գընում,
Էրնէկ էն քւոր աչքին,
Օխտն ախպօր մէջ ա գընում։

Հա գնա, գնա հետդ եմ,
Զուստ ու չաքմայ ոտիդ եմ,
Մսէ աղլուխ թաթիդ եմ,
Փունջ մանիշակ ծոցիդ եմ։

Հա դէդը գնա, դէդը գնա,
Միջքիդ քիրմէն եդ գնայ,
Դէսն արի թուշդ պաչեմ,
Ունքամէջդ ետ գնայ։

Հա տով կտամ, տով կտամ,
Գլխովս կտաւ կտամ,
Ով իմ սիրածն ինձ կտայ,
Ֆորթը տակին կով կտամ։

Համբարցըմը գալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա,
Համբարցըմ կանչող ախչիկ,
Ձէնդ ծլվլալիս ա։

Հայ ատար, ատար, Մանուչար,
Սև հաւի կատար, Մանուչար,
Թէ ինձանէ ձեռ քաշես,
Եօրղան դօշակ ոչ մաշես։

Հայ ուռ ես կռանալ մի,
Մեր դռնից հեռանալ մի,
Թէ Աստուածդ կսիրես՝
Սիրել ես մոռանալ մի։

Հաց եմ թխել գարի ա,
Իմ եարը սափարի ա,
Սափար չաքմիդ ես մեռնեմ,
Խօսքերդ շաքարի ա։

Հաց եմ թխել մշակին,
Եդ եմ նստել դօշակին,
Եարիս հէնց կարօտել եմ,
Ինց որ վարթը մանիշակին։

Ձեռներդ ծափ ես տալի,
Քեանքուլդ թափ ես տալի,
Գշեր ցերէդ գցելով,
Ամեն օր խափ ես տալի։

Ձին ա էկել գերանին,
Մեռնեմ Աւետարանին,
Ով իմ վատը կխօսի,
Սև օձը տայ բերանին։

Ձին ա էկել հալել ա,
Փոսն ա դառել՝ սառել ա,
Էդ քու բռնած բանները
Ինձ մոմի պէս հալել ա։

Ձորըն ու դուս անտէր ա,
Ձիմ էրկաթէ բանդեր ա,
Եարիս որ տեսաս, ասա,
Քու խեղճ եարը անտէր ա։

Ձորովս ջուր ա գընում,
Հարցրէք ձուր ա գընում,
Քէնին մհանա ա արել,
Նշանածին տես ա գընում։

Ճալէն ի վեր ծնեփակ,
Շըղակոլոլ ըրեքնակ,
Ըրեքնակին թեր ախպէր,
Շաքար կոտրեմ կեր, ախպէր։

Մադանի ճամփէն ծուռն ա,
Իմ սիրածը մի նուռն ա,
Սիրել եմ տանել պտեմ,
Ճարս դիւանի դուռն ա։

Մաղերդ հլորվել ա,
Աչկերդ բըլորվել ա,
Երեք օր ա տեհել չեմ,
Իմ սիրտս մըլորվել ա։

Մածուն եմ մէրել սեր չունի,
Ջուղն եմ էփել փոր չունի,
Ղովում դարդաշ շատ ունեմ,
Մի ջանիդիլդան տէր չունեմ։

Մանուշակը էրկու թերի,
Սիրածի սիրտը կէրի,
Ով իմ սիրածը ինձ չի տայ,
Դաղաստանին հոքին էրի։

Մանուշակը էրկու թերի,
Սիրածի սիրտը կէրի,
Սիրածը որ սիրածին չի տան,
Լէգատուն կերթայ գերի։

Մատինս դեղին օղ ա,
Կտրինս ծաղկադող ա,
Տուն մտի, դուռը յետ արա,
Թող կտերը դըղդողայ։

Մատումս կայ մատանի,
Ակները վարթ ծիրանի,
Ով սիրածը սիրածէն հանի,
Ցոքին սըտանէն տանի։

Մատըմս ունեմ մատանի,
Աչքն ա վարթի ծիրանի,
Էկէք գնանք դիւանի,
Ով հախ անի՝ նա տանի։

Մենձ բաղի դուռը բաց ա,
Ոտներս շաղով թաց ա,
Եարիցս հեռացել եմ,
Աչքերս լիքը լաց ա։

Մեր բաղըմը փուշ կլի,
Վարթի ծառին փուշ կլի,
Որ դուս ըլես տուն չգաս,
Սիրտս հալ ու մաշ կլի։

Մեր բաղումը նռան ծառ,
Ջուխտ նռները վրէն թառ,
Քու ջուխտ նռանը ես մեռնեմ,
Մինը քաղէր ու ինձ տար։

Մեր թալվարի ծտերը,
Ծլվըլում են կըտերը,
Ով իմ սիրածն ինձ չտայ,
Զանգեալ բռնի ծծերը։

Մեր տան ըղաքին բարդի ծառ,
Էլի խօսքը դարդ է դառ,
Էնքան էկան, գնացին,
Սիրած եարը եդ էդառ։

Մեր տան տակին էրկու ծուխ,
Մինը հանգած, մինը մուխ,
Ես մի գնացած եար ունեմ,
Բեխը ըլորած, ճաւլը թուխ։

Մեր տան տակին շլորի,
Ճեկներքը՝ եդ ըլորի,
Էրնակ էն քվոր աչքին,
Օխտը ախպօր թագ կլորի։

Մթնել ա տուն չի գալիս,
Ամբել ա ձին չի գալիս,
Իմ եարը հեռու տեղ է,
Մի մատը գիր չի գալիս։

Մի բաղ ունեմ ղշերով,
Եարս կգայ քշերով,
Սև սև աչքերին մեռնեմ,
Զորսի կուռը փշերով։

Մի եար ունեմ անուշ ա,
Հալած էրծաթի շուշայ,
Ժամի կռնուց դուս էկաւ,
Ես ասի Թառլան ղուշ ա։

Մտիկ արէք էն ղազին,
Պտպտորիկ բողազին,
Իմ հօրն ու մօրը ինչ ասեմ,
Ինձ տուին էս օլմազին։

Մտիկ տուէք էն ծտին,
Նստել ա եղան լծին,
Էրէկ մի աղջիկ տեհայ,
Աչքս մնաց ջուխտ ծծին։

Նանի ջան, ես մարթ կանեմ,
Գեղ մարթին նամարդ կանեմ,
Թէ փէսէդ հետս գայ ոչ,
Կնստեմ ու դարդ կանեմ։

Նարին, նարին տղայ,
Քանքիւլդ նարին, տղայ,
Ես քի ՀՐդի սիրեցի,
Իմ հէրանց կալին վրայ։

Շիմշիրի գդալ շիրանի,
Թել-թելը քամին տանի,
Իմ եարը սարում, ձորում,
Իմ քունը ինց կտանի։

Ոչխարս արել եմ էրը,
Ջոգել եմ գառնամէրը,
Ով իմ սիրածը ինձ չի տայ,
Ոչ տեսնու որթու խէրը։

Ոչխարս արել եմ բակը,
Դէմ տուել սէլի ակը,
Ով իմ սիրածս առնի,
Զվէլի գլխի թագը։

Ոչխարս արել եմ էրը,
Ջոգել եմ գառնամէրը,
Մեռնի քու չոլախ հէրը,
Դուն խի՞ խլեցիր իմ եարը։

Ուռի ծառին բար չի ըլի,
Առանց քեօնգուլ եար չի ըլի,
Սիրտը որ կայ շուշայ ա,
Կոտրած սրտին ճար չի ըլի։

Ուռի ծառ, կռանալ մի,
Մեր դռնից հեռանալ մի,
Ուռի ծառ, Աստուած սիրես,
Քու եարն եմ, մոռանալ մի։

Զափարիս տակը չափ կտամ,
Ոսկի քիսով թափ կտամ,
Ես իմ պզտիկ տեղովս,
Քեզ պէս շատին խափ կտամ։

Զափար բասմայ կոխել մի,
Շահին դալը ա՝ փոխել մի,
Շաբիքն ինն ա՝ թափել մի,
Էդ եարն ինն ա, խափել մի։

Զիթ եմ հագել սազով ա,
Գլխիս մազը գազով ա,
Հալբաթ ես էլ նազ կանեմ,
Երբոր եարս նազով ա։

Զիթ մընթանէդ հինմաշ ա,
Ունքերդ դալամքաշ ա,
Ախչիկ, ինչ ես միտք անմ,
Իմ ջանս քի փէշքաշ ա։

Զուստիք ունիմ դեղին ա,
Իմ եարը ձեր գեղին ա,
Հիլ ու միխակ շատ ունիմ,
Չիմ իմ եարի ձեռին ա։

Պուճուր ախչիկ, լաւ ախչիկ,
Դու ինձ համար ցաւ ախչիկ,
Ես քեզ թաքուն սիրեցի,
Էս ով արաւ չաւ, ախչիկ։

Պուճուր ախչկայ մէրը,
Խօսկը տուեց նրա հէրը,
Իրեք տարի սիրեցին,
Չտուեց եարի մէրը։

Պուճուր Աստծու զառն եմ,
Թուփչու չինարի ծառն եմ,
Ինչ լաւութին քեզ անեմ,
Որ քու խաթրը ես առնեմ։

Պուճուր թփին լէն տերև,
Պաչեմ ունքերիդ վերև,
Արի ցաւիս դեղ արա,
Հենց դու ըլիս ըմբրարև։

Պուճուր տուն երգէն թարէք,
Իմ ախպոր թագը շարէք,
Քուիրը մեծարք [1]) արէք,
Զալ կովը աղաքն արէք։

Զաղացիս դուռը տաշած,
Մահրըմաս գիւլ քաղած,
Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ,
Ղաստի զալամով քաշած։

Զաղացիս դուռը տարթ ա,
Կտուրը լիքը մարթ ա,
Հրէս էկաւ իմ ախպէր,
Գոդիքը լիքը վարթ ա։

Զաղացիս դուռը փոս ա,
Քար կդցեմ կխօսայ,
Խօսա, խօսալուդ մեռնիմ,
Իմ նանի ազիզ փէսայ։

Զաղացիս դուռը տաշած,
Աղլխիս գիւլը մաշած,
Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ,
Ոսկէ զալամով քաշած։

Զաղացս էրկու դռնի,
Բարց բերէք եարս կռնի,
Ես դու մի բաղմ ըլինք,
Ես չինարի, դու նռնի։

Զաղացս ման եմ տուել,
Սիրել եմ, ջան եմ տուել,
Օխտը տարի սէրուքին,
Մէկ օր պայման եմ տուել։

Ջան գիւլում, ջան ջանի,
Սիրող սիրտը ինց անի,
Ով ինձ սիրողից հանի,
Հոքին սըտանէն տանի։

Ջուխտ ծառի հովին ղուրբան,
Շէգ տղի բոյին ղուրբան,
Էրկու օր ա տեսել չեմ,
Տենողի աչքին ղուրբան։

Ջուր եմ դրել եփ կգայ,
Ալիր եմ մաղել թեփ կտայ,
Աչքս ճամփիդ մնում եմ,
Եարաբ եարս ինձ կգայ։

[1]) Հրաւիրել.

Զուր եմ դրել կեծ ա,
Ոչխարիս աղաքը էծ ա,
Մեռնըմ միջի չորանին,
Որ թաւադից էլ մեծ ա։

Զուր ա գալիս քարիցը,
Ախչիկ ա գալի սարիցը,
Իմ սէրը ոնց կկտրի,
Քեզ պէս ճարտար եարիցը։

Զուրը կգայ գոլ կանի,
Պախրէն բաղչէս ղոլ կանի,
Հա հրէս էկաւ իմ ախպէր։
Խաշ ղումաշս բոլ կանի։

Զրի էն կուռը եօնջայ,
Քարուքանդ կանեմ Գեանջա,
Գեանջու շհարը փուլ գայ։
Իմ ազիզ եարը տուն գայ։

Զրի էն կուռը, էս կուռը,
Քաղել եմ դաստայ նուռը,
Սիրել եմ տանել պտեմ,
Թող տանեն շահի դուռը։

Զրի էն կուռը փուռն ա,
Իմ սաբաբը մի նուռն ա,
Սաբաբ, քու որթին մեռնի,
Զարէն հեքմի դուռն ա։

Զրի վրայ սազ պտի,
Մի օրդակ ու ղազ պտի,
Ես որ կամ թաւլան ղուշ եմ,
Իմ եարը Շահաբաս պտի։

Զրումըս ունիմ կաշի,
Աչքս ճանփին կեաշի,
Մինչի իմ եարըս հասնի,
Զանիս կէսը կմաշուի։

Զրիս էն կուռը դուռը,
Քաղեցի թեփշով նուռը,
Ես չեմ ուզում էդ նուռը,
Ինձ տարէք իմ եարի դուռը։

Սարերի սինձը ի՞նչ կանեմ,
Կաթնով բրինձը ի՞նչ կանեմ,
Թող իմ սիրածը ինձ տան,
Ոսկին ու էրծաթը ի՞նչ կանեմ։

Սարերին ծաղիկ կլի,
Ոչխարին աղիք կլի,
Էն քիրը որ ախպէր չունի,
Սիրտը սև թաղիք կլի։

Սարերին կլի ղանձիլ,
Քեղը հետը, ծլոտ, անծիլ,
Ով իմ սէրս յետ առնու,
Որթին ըլի անծիլ-անծիլ։

Սարերըմը տուն ունիմ,
Միչին ոսկի սին ունիմ,
Ա՜ շան տղայ, քիչ խօսայ,
Քի պէս հազար շուն ունիմ։

Սարէն գուգայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր,
Քիրը մեռնի ախպօրը,
Իրեք օրէն թաքաւոր։

Սարը սարին թուշ կլի,
Սարի գլխին ղուշ կլի,
Նանը բալին տեսնելիս,
Սիրտը աչմիշ կլի։

Սարի խոտը ծեղուածեղ,
Ախպէր,գնանք միատեղ,
Որ հարամին վրայ տայ,
Գլուխս տամ գլխիդ տեղ։

Սարու�ունիմ թել մանած,
Իմ սիրած, քու հաւանած,
Երեք օր է տեսել չեմ,
Հէնց եմ լէգդու թալանած։

Սև եմ, սևաւոր դուշ եմ,
Դեղին թևաւոր դուշ եմ,
Սարերին ագլան կտամ,
Նանի ձեռի սաւոր դուշ եմ։

Սպաս եմ արել կէծ ա,
Ոչխարիս աղաքն էծ ա,
Մեռնեմ ետնի չոբանին,
Վարթ մանչակի պէս ա։

Վարթեորի իր օրն ա,
Որթին հօրը չի մոռնայ,
Ով իմ սիրածը ինձ չի տայ,
Սև շան նման թող օռնա։

Վարթեորի իր օրն ա,
Որթին հօրը չի մոռնայ,
Ախպերը գնաց սովդայ, [1]
Առչի սովդէն քըորն ա։

Վարդի վրէն փուշ կլի,
Բարդի դօշին դուշ կլի,
Քօրփայ օրից սիրածս,
Եարաբ ինձ Ճրբ թուշ կլի։

Վիճակ, արի քեզ տանենք,
Կտրէ կըտուր դուս հանենք,
Վիճակը տանից դուս էկաւ,
Վրէն երգնքիցը լիս էկաւ։

Վիճակը ընգել ա գերի,
Ազատ տղերանց ձեռը,
Տունս էրկու ձու կտանք,
Ով վիճակը եդ բերի։

Վիճակ, վիճակ, խաս վիճակ,
Աստծու տարին գաս վիճակ,
Վիճակ հանող աղջկերանց,
Մուրազներուն տաս վիճակ [2]։

Վիճակ, վիճակ, վարթ վիճակ,
Ես ու դուն մտնենք մի փչակ,
Զվէլ [3]) լիսը քչփչանք,
Լիսէն եդը կչկըչանք։

Տանս դուռը բաց ա,
Պուտիկ պուտիկ ալած ա,
Եօրղան դօշակ քցած ա,
Եարս վրէն կռնած ա։

Տանս տակը զանանայ,
Ղարղու կտամ դիմանայ,
Կուռդ մէգնի ջուրն ինձ տուր,
Խմեմ սիրտս հովանայ։

Տանս տակին բարդի ծառ,
Էլի խօսքը դարդ է դառ,
Հչկէլը էկան գնացին,
Սիրած եարս եդ էդառ։

Տեղ եմ գցել փոթ կգայ,
Բարձ եմ դրել սոթ կտայ,
Մեռնեմ միչի քնողին,
Անող խնգան հոտ կգայ։

Քաղկիս ճանփէն խոտել ա,
Եզներքը նստոտել ա,
Խաբար տարէք իմ նանին,
Մազերս մաղցոտել ա։

[1]) Աղջիկ տեսնել, ուզել.
[2]) Վիճակը բանալիս ամենից առաջ ասում են այս տունը։ [3]) Մինչև.

Քարիս տակին էրկու ղոչ,
Մինը փնջած, մինը ոչ,
Մեռնեմ Աստծու մուրվաթին,
Մնին կտայ, ՀԼին ոչ։

Քարիս տակին կանանչ խոտ,
Փունջ մանիշակ, անուշ հոտ,
Թէ իմ սիրածն ինձ չի տաք,
Ես ինձ կանեմ հարիր ճոթ։

Քարի տակին կացել եմ,
Լաչակս լուացել եմ,
Խաբար արէք իմ նանին,
Շատ դարդի տիրացել եմ։

Քարի տակին կացել եմ,
Մեխակով լեղացել եմ,
Իրեք օր ա տեհել չեմ,
Հենց գիտեմ քոռացել եմ։

Քամին փչեց հով բերուց,
Եզը ծնեց կով բերուց,
Ես մի թառլան լօրցի,
Ինձ ըստի ՀՎ բերուց։

Օխտը հասար մի դռնի,
Ես բարց դնեմ դու կռնի,
Ես ծիտ դառնամ դուն կաքաւ,
Ես կթռչեմ՝ դուն բռնի։

Օխտը ջաղաց մի դռնի,
Բարց դրէք եարս կռնի,
Աղայ Ջան, գլխովդ պտիտ դամ,
Խօսքս գեղամէջ բռնի։

Օխտը օթախ մի դուռը,
Ցնծում ա միջի նուռը,
Իմ սիրելի բլբուլը,
Ընկել ես դռնէ դուռը։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

Խնոցու երգը.

Իմ խնոցին շիմշիրի,
Քու խնոցին փշրուի,
Խնոցի եմ հարէ եղ չի կայ,
Քոսակ մարթին դեղ չի կայ։
Հարի, հարի, խնոցի.
Մէջդ ա բարի, խնոցի,
Ունգդ բարակ, խնոցի,
Մէջդ կարագ, խնոցի,
Իմ խնոցիմը եղ չի կայ,
Փէսէս էկաւ, տեղ չի կայ։